1904 ՆՈՅԵՄԲԵՐ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եգիպտուհի *(պատկեր)*։
Աւծիւն ու ազուաւը Զ. Տ.-Գ.։
Գիւղացու վշտերից *(ոտանաւոր)* Կ. Կ. Մելիք-Շահնազարեան։
Խորամանկ կատուն Ա. Թ. Խնկոյեանց։
Բաղդի տուրքը *(ոտանաւոր)* Հասօ։
Ծովափին Զ. Տ.-Գ.։
Անսիրտ մարդ Մ. Ղահրամանեան։
Ճանապարհ *(ոտանաւոր)* Ս. Իւզբաշեան։
Իմ փոխրիկ Հրանոյշ ու Վեհանոյշին Զ. Տ.-Գ.։
Խաչատուր Աբովեան—Գրիգոր Զուբարեան։
Մահկական երգ *(ոտանաւոր)* Սէյրի։
Հարբուղխ եւ երիրաւարժ Գ. Ղազարեան։
Գիտական
Հերբերս Սպենսերի մտերից եւ աճորիզմներից։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԻՑ

ԱՂԲԻՒՐ ստացող բաժանորդներին *յորս ամսայ* փոխարէն հոկտեմբերից սկսած ուղարկւում է *Տարազ* մինչեւ յունուար:

ԱՂԲԻՒՐԸ լոյս է տեսնում տարեկան *12 №№* ամփոփւած *տասը* գրքի մէջ: Սրանցից *հինգը* մինչեւ տարւայ կէսը, *(յունիսի 6-ը)* արդէն ստացել են բաժանորդները: Երկրորդ կիսամեակին մենք պարտաւոր էինք *յորս №№* պակաս հրատարակել, որը եւ կատարում ենք:

ԱՂԲԻՒՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ

մանուկների, ծնողների եւ դաստիարակների համար

XXII ՏԱՐԻ Ն Ո Յ Ե Մ Բ Ե Ր 1904 Թ.

Տպարան «ՀԵՐՄԷՍ»
Тип. «ГЕРМЕСЪ» С. Назарьянца, Мадатовск. ул. № 81.
ԹԻՖԼԻՉ

Дозволено цензурою Тифлисъ, 4-го Ноября 1904 года.

Եգիպտուհի

ԱՐՇԻՆ ՈՒ ԱԳՈՒԱԻԸ

— Ես միշտ ասրսապիում եմ, ասում էր ագռաւը արծուին, երբ տեսնում եմ, որ դու քո ճագերին սովորեցնում ես թռչել բարձր ամպերի տակ:

Ես էլ կը սարսափէի, պատասխանեց արծիւը, եթէ իմ ճագուկները ազատ-ուիկներ լինէին:

Չ. Տ.-Գ.

ԳԻՂԱՑՈՒ ՎՉՏԵՐԻՑ

Մ ո ր ե խ ը

Գարնան օրերին գեղջուկ երկրագործը
Հինգ զոյգ լծկանով հերկել էր արտը,
Աշնան սկզբին հողը չուռ տւել,
Ունեցած սերմը հողին պահ տւել,
Տափանել, ջրել, խաչ հանել վրան,
Որ սերմը ծլի, արտը կանաչի,
Հնձի ու վինջի, կալը հատաքի,
Մի կողմից տարւոյ կերը ունենայ,
Միւս կողմից դիզւած պարտքը վճարի.
Յոյսերով լցւած, անցրել էր ձմեռը,
Գարնան օրերին անհամբեր հասել,
Տեսել էր աչքով արտը կանաչած,
Ցողունի վրայ հասկը կռացած,
Նա ջերմ աղօթքով դիմել էր Աստծուն
Շաւր աչքից պահել իր արտը սիրուն,

Ձաբաթ օրերին հալալ քրտինքից
Նա մոմ էր վառել սրբերի առաջ,
Ձոքէչոք լինկել մայր-հողը լիզել,
Որ այդ մայր-հողը իր մուրազը տայ,
Մէկին հինգշաբիկ մասուլ սառնայ,
Տան դրսի հոգսից մի քիչ թեթևնայ.
Բայց աւաղ բադղին, գարնան վերջերին
Մի ձայն բարձրացաւ՝ «մորեխ է գալիս,
Այնպէս չատ մորեխ, որ լոյս ցերեկին
Խաւար է տիրում նրանց թռչելիս»։
Գեղջուկի սիրտը մթնեց երկիւղից,
Աչքեր ու խաչեր կանչեց օգնութիւն,
Գիշեր ու ցերեկ աղօթք էր անում՝
«Հեռացնւր, երկինք, այս մեծ փորձութիւն,
Արտն է իմ միակ յոյսն ու ապաւէն,
Նա է գեղջուկիս ցաւերին դարման,
Իմ վիշտ, տրտմութիւն նա է փարատում,
Իմ ամբողջ տունը նրան է նայում»։

Բայց երկինք ականջ չդրեց խեղճին,
Մորեխը եկաւ անթիւ անհամար,
Նստեց կանաչ արտերի վրայ,
Խժռեց մի ծայրից, միւս ծայրով ելաւ,
Աւեր թողնելով գնաց ու կորաւ...
Գեղջուկը կանգնած իր արտատեղում,
Ձեռքերը խաչած, աչքերը գետնին,
Գալոց օրերի պատկերն էր տեսնում,

Մայը հողի վրայ արցունքը թափում։
Ամեն մի կաթիլ արցունք թափելիս,
Յիշում էր ծարաւ քաշած տառապանք։
Հասաւ երեկոն, արևը մտաւ,
Արևի հետն էլ իր յոյսը կորաւ...

Կ. Կ. Մելիքեան

Նկ. Բէյխեռդի «Կարմիր գդակ»

ԽՈՐԱՄԱՆԿ ԿԱՏՈՒՆ

—

Մկները չար կատուից շատ էին երկիւղ կրում և ամեն տեսակ զգուշութիւն ձեռք էին առել, որպէսզի նրա ճանկը չընկնէին: Կատուն վաղուց էր որ մկան միս չէր ճաշակել, ուստի նա դիմեց խորամանկութեան. ուխտաւորի զգեստ հագաւ և գնաց վախկոտ մկների ծակի առաջ կանգնեց:

—Յարգելի մկներ,—ասաց կատուն,—դուրս եկէք ձեր ծակերից և ինձ հետ հաշտէք: Ես հեռու ճանապարհ ուխտի եմ գնալու, ո՞վ գիտէ վերադառնամ, չվերադառնամ: Դուրս եկէք, աւել-պակասը հալալ արէք: Ես ձեր պէմ մեղաւոր եմ.—որիդ հօրն եմ կերել, որիդ մ՛որը, որիդ եղբօրը, որիդ քրոջը... Իմ խիղճն ինձ տանջում է, մեղայ եմ գալիս ձեր և ձեր նահատակների առաջ:

Մկներից մի քանիսը հաւատացին կատուին և դուրս եկան հաշտելու:

Կատուն որ մկներին տեսաւ, աչքերից կայծեր թռան. իսկոյն և եթ յարձակուեց մկների վրայ և երկուսին բռնեց: Մնացած մկները լեղապատառ ընկան իրանց բները և ապատուեցին:

Նրանցից մէկը, որը մի համարձակ մուկն էր, յանդիմանեց կատուին.

—Է՜յ, խաբեբայ կատու, ասելով, կծեց կատուի լեղուն:

Աբ. Խնկոյեանց



Բ Ա Ղ Դ Ի Տ Ո Հ Ր Ք Ը

(Չ ր ո յ ց)

—

Մարդի մէկը գիշեր-ցերեկ
Աշխատում էր անպաղար,
Բայց կուշտ փորով բնաւ երբէք
Նա անկողին չէր մտնում։

Հագուստը միշտ պատառոտած,
Հացի տաշտը միշտ դատարկ,
Թէև ունէր մի խարխուլ տուն,
Բայց տան միջին՝ ոչ մի սարք։

«Գիշեր-ցերեկ աշխատում եմ,
Դառն քրտինք եմ թափում,
Պին, երեխայքս քաղցած, մերկ են,
Կոտեմն հացին չեմ հասցնում։

«Գնամ, ասաց, Ֆալաքի մօտ,
Ցաւերս յայտնեմ ես նրան.

Գուցէ, որպէս հայր նա գթոտ,
Խնամք տանի իմ վերան»։

Աստուած կանչեց,
Խաչակնքեց

Ձամբայ ընկաւ խեղճ մարդը.
Գլուխը քաշ գնում էր նա,
Մրմնջալով իր պարզը։

—

Ձանապարհին առաջն եկաւ
Քաղցած, նիհար մի մեծ գայլ.
Բարև տւեց և հարց արաւ.
«Ո՞ւր դու բարով, մարդ եղբայր»։

—«Գալաքի մօտ, պատասխանեց
Մեր աղքատը վշտահար.
Գալաքի մօտ. ցաւս յայտնեմ
Եւ ապրուստի խնդրեմ ճար»։

—«Խնդրեմ, ասաց գայլը քաղցած,
Խնդրեմ իմ ցաւն էլ յայտնես,
Գուշա մնալու մի ճար գտած՝
Յետ դառնալիս ինձ պատմես»։

—«Բարի». ասաց, չարունակեց
Մեր աղքատը իր ճամբան.

Երկար, երկար ճամբայ կտրեց,
Հասաւ մի երկրի սահման։

Տեսաւ աշխարհն ալեկոծւած,
Կարծես չրկար երկրին տէր.
Լսւում էր լոկ վիշտ, կոծ ու լաց,
Չէր ճանաչում չունն իր տէր։

Թագաւորը երբ իմացաւ
Աղքատի ուր գընալը,
Կանչեց իր մօտ, յայտնեց իր ցաւ
Եւ իր երկրի աւհալը։

«Խնդրեմ, ասաց Թագաւորը,
Երբ Ֆալաքին դու տեսնես՝
Այս խռովութեան լսես պատճառն,
Վերադարձիդ ինձ պատմես»։

—«Բարի». ասաց, առաջ տարաւ
Մեր աղքատը իր ճամբան.
Այս անգամ էլ առջևն տեսաւ
Մի մարդ՝ վարելիս գութան։

Գութանաւորն երբ իմացաւ
Ճամբորդի ուր գնալը,
Խորին կերպով գլուխ տւեց,
Պատմեց նրան իր հալը։

«Այս նոյն արտում ամեն տարի
Ցանք եմ անում մեծ յուսով.
Բայց ինչ ցանեմ—ցորեն, պարի,
Գէսն սևանում է ժանգով։

«Խնդրեմ, ասաց գուշմանաւորն,
Երբ Փալաքին դու տեսնես՝
Յայտնես իմ ցաւ և հարկաւորն
Իմանաս ու գաս պատմես»։

—«Բարի», ասաց, առաջ գնաց
Մեր աղքատը իր ճամբան.
Խնձորի ծառ մի գօսացած
Տեսաւ իրան յանկիման։

Ծառի տէրը երբ իմացաւ
Ճամբորդի ուր գնալը,
Խորին կերպով գլուխ տւեց,
Նրան պատմեց իր հալը։

«Քսան տարուց աւելի է,
Ինչ տնկել եմ ես այս ծառ,
Իմ բերանը դեռ չէ առել
Սրա պտղից մի նուբար։

«Խնդրեմ, ասաց ծառի տէրը,
Փալաքին երբ դու տեսնես՝

Նրան պատմես իմ դարդերը,
Ձարն իմանաս, գաս պատմես»։

—«Բարի». ասաց, չարունակեց
Մեր աղքատը իր ճամբան.
Այս անգամ էլ գետի ափին
Մի ձուկ տեսաւ կէս-կենդան։

Խեղճուկ ձուկը թրփրտում էր,
Գլուխը գարկում աւազին
Եւ դառնապէս հեծեծում էր,
Եւ ալոտասում դառնագին։

Թչուառ ձուկը երբ իմացաւ
Ճամբորդի ուր գնալը,
Խորին կերպով գլուխ տուեց,
Պատմեց նրան իր հալը։

«Ձգում եմ ես գլխիս միջին
Մի ահագին ծանրութիւն,
Նրա հետ էլ ցաւ սաստկագին,
Չունեմ հանգիստ օրն ի բուն։

«Խնդրեմ, ասաց ձուկն ցաւագար,
Երբ Փալաքին դու տեսնես՝
Յայտնես ցաւս, իմանաս ճար,
Յետոյ դարձիդ ինձ պատմես։

—«Բարի». ասաց, գետը անցաւ
Մեր աղքատը վշտահար.
Գետի այն կողմն մի մարդ տեսաւ.
Դա Փալաքն էր ծեր ճարտար։

—

Խորին կերպով վրէս տւեց
Մեր աղքատը Փալաքին,
Տրտում, տխուր իր ցաւն պատմեց
Եւ ճար խնդրեց իր ցաւին։

Խորհուրդ հարցրեց նա Փալաքից,
Թէ խեղճ զայլը ինչ անի,
Որ ապատւի սովամահից,
Ուտելու միշտ բան գտնի։

Պատճառն ինչ է, որ թագաւորն
Մի հանգիստ օր չի տեսնում,
Նա իր երկիրն ամենայն օր
Արեան ծովումն է գտնում։

Թէ արտասէրն ինչ անի,
Որ արտն չլինի ժանգահար,
Դառն քրտինքը զուր չանցնի,
Որ արան ամբողջ արդիւնք տար։

Թէ ինչո՞ւ է խնձորի ծառն
Ձրտզած, անբեր միշտ մընում,

Այգեպանի քըրտինքն դառն
Ու աշխատանքն զուր անցնում։

Թէ խեղճ ձուկը ինչո՞ւ է միշտ
Ջգում գլխին խիստ ցաւեր.
Ի՞նչպէս պէտք է անցնի այդ վիշտ,
Կեանքը չլինի ծանր բեռ։

—

Երբ աղքատը դեռ ծնկաչոք
Խորհուրդի էր սպասում՝
Ծեր Փալաքը միշտ մտահոգ
Իր անիւն էր պարձնում։

«Լսիր խրատս առաջին զու
Եւ հաղորդիր նրանց էլ,
Որոնց բաները, խորհրդատու
Այստեղ ինձ մօտ ես եկել։

«Բաղդը սահում է սրընթաց
Եւ հանգիպում միշտ յարկարծ.
Բաղդի տուրքին
Ով չտայ գին՝
Յիմար է նա անկասկած։

«Ամենայն օր այդպէս յիմար
Կըգտնի միշտ գայլն անպատճառ։
Ամենայն օր կուշտ կլինի՝
Պատահածին թէ ուր ուտի։

«Թագաւորն է մի ծպտեալ կին.
Կնոջ կոչումն է լինել կին.
Երկիր և ազգ կառավարել՝
Տղամարդուն է միշտ վայել։

«Երկրագործի արտի կէսում
Պըղինձ հանք կայ անպատում,
Այդ պատճառով ամէն տարի
Նա ժանգոտ պէտք է լինի։

«Խնձորենին արնկըւած է
Ոսկու մի մեծ գանձի վրայ.
Այդ պատճառով գօսացած է
Եւ չի տալիս պտուղ նա։

«Ձկան գլխի կաշու տակին
Կայ անգին քար պատուական.
Քանի այդտեղ է քարն անգին՝
Անվերջ կլնի ցաւը ձկան»։

*

Խ[ա]տանների մեծ պաշարով
Աղքատը չեա դառնալիս՝
Ում պատահեց՝ ճարն ասելով
Տւեց նրանց աչքալիս։

Զուկը նրան մեկնեց գլուխ
Եւ ապաչեց սրտաբուխ.

«Հանիր, եղբայր, քարը քեզի՝
Եւ ինձ ցաւից ազատի»։

Այդեպանը խնդումերես
Նրան տալով գանձի կէս՝
«Հանենք, ասաց, մենք այդ ոսկին
Եւ եղբօր պէս անենք բաժին»։

Արտաւէրը զաւթապին
Կէսը տալով աղքատին՝
«Հանենք, ասաց, մենք այդ պղինձ,
Բաւական է քեզ ու ինձ»։

Իսկ թագաւորն, որ էր մի կին՝
«Դէ, որ գիտես իմ գաղտնին,
Ասաց, եղիր ինձ դու ամուսին,
Սամոյրն ձգիր քո ուսին.
Որպէս այր մարդ քեզ է վայել
Երկիր և ազգ կառավարել»։

Իսկ աղքատը կանգ չառնելով՝
Այս էր կրկնում անվրդով.
«Բաղդը սահում է սրընթաց
Պիտ հանդիպի ինձ յանկարծ.
Ձեզ լսելու ես կամք չունեմ,
Պէտք է բաղդիս դէմ վազեմ»։

—

Վազեց, վազեց, գայլին հասաւ,
Բարև տւեց, կանգ առաւ.
Իր արկածներն մէկիկ-մէկիկ
Պատմեց նրան մեր աղքատիկ։
Գլուխը քաշ գայլը լսեց,
Յետոյ նրան դարձաւ ասեց.

«Բաղդը, սահելով սրընթաց
Յանդիպում էր քեզ զրկաբաց.
Բաղդիդ դու միշտ քայլ տւիր,
Նրա տուրքերն մերժեցիր։

«Քեզի համար չունեցան գին
Ձկան գլխի պատւական ակ,
Այգեպանի ոսկու մեծ հակ,
Երկրագործի պղնձի հանք,
Կին իշխողի թագը խիստ թանկ։
Յիմար ես դու, իսկ յիմարին
Փալաքն տւել է ինձի բաժին»։

Գայլը արագ վրայ վազեց
Եւ աղքատին պատռեց լափեց։

Հասօ

Ծ Ո Վ Ա Փ Ի Ն

—

Երեկոյ է։ Ծովի կանաչ ու կապոյտ ալիքները վազում են դէպի ափը և փշրւում, ցրւում են մարգարտի նման՝ ճերմակ փրփուրի շերտ թողնելով թեք ափին, որը խիտ փռւած է խայտաբղէտ ու ողորկւած մանրիկ քարերով։ Շոգենաւի պըղընձէ լապտերների, քայիւտների պատուհանների վրայ պայծառ շողշողում են՝ այնտեղ, հեռւում, փարոսի սպիտակ աշտարակի յետևը մայր մտնող՝ արեգակի թեք ճառագայթները։ Ոսկէշողիւն մակոյկները անց ու դարձ են անում շոգենաւից դէպի վարդաշող քաղաքի ծովափը։ Երկինքը պարզ է ու տեղ-տեղ վարդագոյն։ Ահա այնտեղ, կծօխւրի թփերի ետևը, սպիտակին է տալիս ամարանոցը։ Հարազատ ընտանիքը հաւաքւել է պատշգամի վրայ։ Օդը ծանրացել է։ Մարդ ուզում է վազել դէպի ստւերախիտ այգին, որտեղ կախւած են խաղողի ողկոյզները, կարմրին են տալիս խնձորները, թաւախիտ դալարի միջով փայլփլում է ոսկէհուռ սերկևիլը. բայց դեռ պէտք է նստել սեղանի առաջ, այն էլ եռացող, փայլուն հեշտաեռի մօտ։ Ահա թէյը վերջացաւ։ Ամենքը դիմում են այգի... Շոգենաւի վրայ ոլորապտոյտ բարձրանում է շոգու ամպը. մեքենայի շվոցը տարածւում է ծովախորշի վրայ... Մանուկները սկսում են վազել դէպի ափ՝ նայելու, թէ ինչպէս պիտի հեռանայ շոգենաւը, որը դանդաղ շուռ է գալիս և սկսում է սահել նիրհող ծովի վարդաշող մակերևոյթի վրայ։ Բուռերով նետած խիճը թափւում է զուլալ ջրի մէջ. մանկական ծիծաղը հեռու տարածւում է ջրի վրայ, մինչև շոգենաւը։ Ահա մէկը ափից շարժում է ճերմակ թաշկինակը... Արևամոի հրային ծովը աւելի է վառւում։ Շոգենաւը աւելի է արագացնում իր գնացքը. պարզ լսւում է հզօր շոգենաւի պատուհակի համաչափ ճողփիւնը... Իսկ մանկական աչքերը մի առանձին բաւականութեամբ դեռ հետևում են հեռացող ծովային հսկային...

Ջ. Տ.-Գ.

Սեւ-ծով («Նալտա» շոգենաւ)։

Ա Ն Մ Ի Ր Տ Մ Ա Ր Դ

—

Ժամանակով Սիլան անունով մի մարդ էր ապրում։ Տեսքով նա նման էր բոլոր մարդկանց. միայն մի բանով էր զանազանւում. նա երբէք չէր լալիս, չէր ծիծաղում և չէր կարմրում, երբ որևէ վատ բան էր անում։ Իսկ դրա պատճառն այն էր, որ նա անսիրտ էր։ Նա կամենում էր բոլոր մարդկանց նմանւել, ցանկանում էր, որ ինքն էլ կարողանար լալ և ծիծաղել, որ իր կրծքում բաբախէր սիրտը, թէև լսել էր, որ սիրտ ունեցող մարդիկ շատ դժբաղձանքներ լաց լինում, որ մինչև անգամ մարդիկ մեռել են վշտից։

Մի անգամ Սիլանը գնաց մի իմաստուն ծերունու մօտ, որը միևնոյն ժամանակ և՛ կախարդ էր։ Ծերունին ապրում էր սարերում, ուր այծեր էր պահում և նրանց կաթից իւղ ու պանիր շինում։ Կախարդը նստած էր խրճիթի շէմքում, երբ նրան մօտեցաւ Սիլանը։ Սիլանը պատմեց իր մասին և ասաց.

—Թէև ես մարդու եմ նման, բայց համարեա թէ մի ա-

ձան եմ։ Այսօ լինձ, ինչով կարող եմ ես ուրիշներին նմանիլ։ Ալրել մարդկանց մէջ, բայց չնմանիլ նրանց—դա ինձ համար շատ տխուր է։ Դու չէս կարող իմ մէջ սիրտ դնել։

—Ո՛չ, ասաց կախարդը.—քո մէջ սիրտ դնել չեմ կարող, բայց կարող եմ քեզ այն դարձնել, ինչ որ դու կըցանկանաս. և եթէ կապրես այնպէս, ինչպէս հարկաւոր է, այն ժամանակ սիրտը ինքն իրեն կըզոյանայ քո մէջ։ Այժմ ընտրիր, ինչ որ կամենում ես. ես կարող եմ քեզ թագաւոր, գիտնական, հասրուստ կամ թէ չէ փայտհատ դարձնել։

—Միայն ոչ փայտհատ ասաց Միլանը.—այդ դէպքում չես կարող բարութիւն անել, քանի որ ամբողջ օրը պէտք է փայտ կտրել։

—Ուրեմն դու աւելի ցանկանում ես թագաւոր լինել, հարցրեց Ծերունին։

—Այո, ասաց Միլանը.—թագաւորը կառավարում է մի ամբողջ ժողովուրդ.—նա մեծ իշխանութիւն ունի և շատ մեծ բաներ կարող է անել։

—Վաղը, երբ կըզարթնես, ասաց կախարդը,—դու թագաւոր կըլինես։

II

Միւս օրն առաւօտեան Միլանը զարթնեց թագաւորական սենեակներում։ Նա ցատկեց անկողնից և նայեց լուսամուտներից։ Պալատի մի կողմում գտնում էր այգին հազարդիւտ ծառերով, ուր ղբօսնում էին եղջերուները և թռչում էին զանազան գոյնզգոյն թռչուններ։ Մի կողմում բազն էր գտնում, ուր մի շատ կանգնած էր լինում թագաւորական պահապանը։

Միլանը սկսեց հագնուել։ Իսկոյն և եթէ երկու ծառայ վրայ հասան՝ նրան օգնելու։ Երբ նրան հագցրին թագաւորական զգեստն ու թագը, նա ցանկութիւն յայտնեց այգում մի պտոյտ անելու։ Միլանին հետևեցին ծառաները՝ նրա զգեստի փեշերից բռնած։ Երբ նա այդտեղից քաղաք գնաց՝ տաս հազար զինուոր դիմաւորեցին նրան ուրախ բացականչութիւններ-

ով և զինուորական պատիւ տալին։ Ժողովուրդը հետևում էր Սիլւանին։ Կանայք շարժում էին իրանց թաշկինակները։

Սիլւան թագաւորն ամեն օր մեծ գործեր էր կատարում։ Նա մի քանի քաղաք հիմնեց և բազմաթիւ նաւեր պատրաստեց։ Նա այնքան զօրք հաւաքեց, որ կարողացաւ Հարևան թագաւորին յաղթել, որին յետոյ գերի վերցրեց։ Սիլւանի թագաւորութեան մէջ կարգն օրինակելի էր։ Երբ աւազակները կամ գողերը էին բռնում, այն ժամանակ չարդում էին նրանց գլուխները և ուրիշներին օրինակ տալու համար կախում էին քաղաքի դարպասներից։ Եւ որովհետև զօրքի ու թագաւորական ծառաների պահպանութեան համար մեծ դումար էր հարկաւոր, դրա համար էլ թագաւորը հրամայեց ժողովրդից կըրկնակի հարկ ժողովել։ Նա չէր տեսնում, թէ ինչպէս էին լալիս խեղճ մարդիկ, երբ ստիպւած էին իրենց վերջին ձին կամ կովը ծախել, ուստի և շատ գոհ էր իր թագաւորութիւնից։

Մի անգամ նա կանչեց իր ծառաներին և հարցրեց նրանց.

—Արդեօք աշխարհումս ինձանից լաւ թագաւոր կա՞յ։

Ծառաները պատասխանեցին, որ նրանից աւելի լաւ, արդար թագաւոր երբէք ոչ եղել է, ոչ կարող է լինել։

Բայց ծառաների դովասանքները մի տեսակ չուրախացրին Սիլւանին, և նրա սիրտը չըբաբախեց։

Մի անգամ երեկոյեան նա դուրս եկաւ իր պալատից և կրկին գնաց սարերն իմաստուն Ծերունու մօտ։ Ծերունին փաթաթում էր այծի կոտրւած ոտը, որը խոշտի կերպով մկկում էր։ Կախարդը լսեց բոլորը, ինչ որ պատմեց Սիլւան թագաւորը և ասաց.

—Դու կարող ես թողնել թագաւորութիւնդ և մի ուրիշ բան դառնալ, եթէ միայն կամենում ես։

Սիլւանն ասաց.

—Ես կամենում եմ մեծ գիտնական լինել։ Ես այդպիսով կիմանայի այն բոլորը, ինչ ոչոք մինչև իմ գիտնական դառնալս չէ իմացել, և այդ բոլորը կըսովրեցնէի մարդկանց։

—Վաղը, ասաց Ծերունին,—դու կըզարթնես մի խաղաղ տան մէջ, որը լի կըլինի գրքերով, և թէև աշխարհում դու բո-

լոր մարդկանցից աւելի կիմանաս, բայց և այնպէս ամեն օր որևէ նոր բան կըսովորես։

III

Այդպէս էլ եղաւ։ Տունը, որի մէջ ղարթնեց Սիլւանը— շատ փոքր էր, և նա այնքան ծառաներ չունէր, որքան թագաւոր եղած ժամանակ. նա միայն այնքան ծառաներ ունէր, որքան հարկաւոր էր այն բանի համար, որ Սիլւանը միջոց ունենար, բացի գիտութիւնից, ուրիշ ոչ մի բանի մասին չըմտածելու։ Նրա ծառաները կարգի էին դնում տունը, պատրաստում և մատակարարում էին կերակուրները, իսկ դրագիրները մագլցելով բարձրանում և իջնում էին սանդուխաներով, որպէսզի Սիլւանին բարձր պահարաններից կարդալու գրքեր հասցնեն. բացի դրանից, նրանք թղթի մեծ թերթերի վրայ գրում էին այն, ինչ որ Սիլւանն էր թելադրում։ Սիլւանը երբեմն հեռանում էր իր տնակից, որպէսզի ուսումնասիրէ հողը և իմանայ, թէ ո՛րտեղից են սառնում ածուխը, երկաթն ու ոսկին։ Նա ճանապարհորդում էր դետերի և ծովերի վրայով և ուսումնասիրում էր՝ թէ ինչպէս են ապրում ձկները և ինչ է կատարւում ծովի յատակում։ Նա թռչում էր և՛ օդապարիկով ու դիտում էր երկինքը, ամպերը և ուսումնասիրում էր փոթորիկներն ու մրրիկները։ Նա սիրում էր դրագիրներին գրքերում գրել այն բոլորը, ինչ որ նա սովորում էր։ Տպագրւում էին այդ գրքերը, ցրւում և կարդացւում էին ամբողջ աշխարհում. բոլորեքեան զարմանում էին Սիլւանի գիտութեան վրայ, որի փառքը տարածւել էր ամենուրեք։

Մի անգամ Սիլւանը կանչեց իր դրագիրներին ու ծառաներին և հարցրեց նրանցից.

—Արդեօք աշխարհում ինձանից գիտուն մարդ կա՞յ։

—Ո՛չ, պատասխանեցին դրագիրները,—քեզնից գիտուն և խելօք մարդ չի եղել և չըկայ։

Բայց Սիլւանին չուրախացրեց այդ գովասանքը և նրա սիրտը չըբաբախեց։

Նա դէն չպրտեց իր գլքերը և կրկին անգամ գնաց կախարդի մօտ։

Սիլւանը նրան աչխատելիս գտաւ։ Ծերունին իր այծերի համար տնակ էր շինում, որովհետև արդէն սկսւել էր ձմեռը։

—Դու դեռ անաչքառ ես, հարցրեց ծերունին, երբ Սիլւանը մօտեցաւ նրան։—Այժմ ինչ գարձնեմ քեզ։

—Հարուստ, ասաց Սիլւանը։—Այնպէս արա, որ այնքան փող ունենամ, որքան ցանկանամ. այն ժամանակ ես այնքան կօգնեմ աղքատներին, որ վերջիվերջոյ իմ սիրտն էլ կըբաբախէ։

—Վաղը դու աչխարհիս ամենահարուստ մարդը կըլինես, ասաց կախարդը։

IV

Այդպէս էլ եղաւ։ Սիլւանը հարստացաւ և սկսեց իր փողերը բաժանել նրանց, որոնք կարիք էին զգում։ Եթէ նա մի ծուռած խրճիթ էր տեսնում, այն ժամանակ իր ծառաներին ուղարկում էր ուղղելու. եթէ նրան ոտաբոբիկ մարդ էր պատահում՝ հրամայում էր նրա համար ոտնաման կարել. հրամայում էր հագցնել մերկերին և դէպի իրան պարզած իւրաքանչիւր ձեռքում՝ խղճալով ոսկի էր դնում։ Նրա գործը կայանում էր միայն նրանում, որ շրջում էր իր կառքի մէջ և աղքատներ դանում, որպէսզի իսկոյն և եթ նրանց օգնէ։ Բոլորեքեան գովում և շնորհակալութիւն էին յայտնում նրան, բայց նա այդ բոլորից ոչ մի ուրախութիւն չէր զգում։ Պատահեց, որ սաստիկ սով ընկաւ։ Դիշեր թէ ցերեկ մարդիկ գալիս էին Սիլւանի մօտ օգնութիւն խնդրելու։ Նա ոչ օրի չէր մերժում, իսկ նրա ծառաները անդադար աղքատներին ոսկիներ էին բաժանում։

Մի անգամ Սիլւանը հարցրեց ժողովրդից.

—Արդեօք աչխարհում ինձանից աւելի բարեգործ մարդ կա՞յ։

Բոլորեքեան դոչեցին, որ նրանից աւելի բարեգործ և բարի մարդ չկայ և չի էլ կարող լինել աչխարհում։

Այն ժամանակ Սիլւանը ձեռքը կոխեց իր տաք ու ճոխ

հազսի տակը, կրծքի վրայ դրեց և կարծում էր, թէ կըզդայ իր սրտի բաբախումը։ Սակայն սիրտը չէր բաբախում։

Սիլւանը ժողովեց իր մօտ ծնացած բոլոր ոսկիներն ու վոզերը, ծովը գցեց և գնաց կախարդի մօտ։

Ծերունին կաթ էր տալիս մի խեղճ այրի կնոջ, որի ամուսինը հէնց նոր էր մեռել։ Նրա ամուսինը հինգ փոքր երեխայ էր թողել, որոնց կերակրելու համար խեղճ կինը ոչինչ չունէր. ծերունին ժպտում էր քաղցրութեամբ, իսկ կնոջ աչքերում արտասուք էր երևում։

Ծերունին տեսնելով Սիլւանին՝ հարցրեց.

—Զըլինի թէ վերջացել են փողերդ։

—Ո՛չ, ասաց Սիլւանը։—Ես փող շատ ունեմ, միայն սիրտ չունեմ։

—Է, չէս ուզում փայտհատ լինել, հարցրեց կախարդը։

—Ուզում եմ, ասաց Սիլւանը։

—Այդպէս ուրեմն վաղն առաւօտեան դու մէն-մենակ կըգարթնես մի ադբատ խրճթի մէջ, ասաց ծերունին։—Ընկերդ կըգայ քո տեղից և դու նրա հետ կըգնաս անտառ փայտ կըտրելու։ Դրան տեղում դու մի կացին կըգտնես, իսկ տեղանի արկղում մի կտոր սև հաց։

V

Այդ էլ այնպէս կատարուեց, ինչպէս ծերունին էր ասել։ Երբ առաւօտեան Սիլւանը զարթնեց իր խրճթիում, մի պարզ և ցուրտ օր էր։ Նա վեր կացաւ, իր վրայ գցեց մաշած բանկոնակը, որ կախած էր մեխից և վառեց վառարանը։ Ցետոյ սովածանալով յիշեց, որ տեղանի արկղում պէտք է որ հաց լինի։ Նա կերաւ հացի ամբողջ կրունկը և սկսեց ընկերին սպասել։

Շուտով մէկը բախեց նրա լուսամուտը։ Այդ նրա ընկերն էր։ Սիլւանը վերցրեց կացինը և նրա հետ անտառ գնաց։ Այնտեղ նրանք մինչև կէսօր փայտ կարեցին։ Կէսօրին սաստիկ յոգնեցին ու սովածացան և նստեցին հանգստանալու։

Յանկարծ նրանք տեսան, որ ծառերի տակում փայլում է

մէկի հագուստը, իսկ մի քիչ յետոյ լսեց և նրա ձայնը։ Դա Սիլւանի ընկերոջ աղջիկն էր, որ հօր համար ճաշ էր բերել։ Նա բարևեց Սիլւանին, նստեց կոճղի վրայ և բաց արաւ կապոցը։ Հայրն աղջկայ հետ մի շարքում նստելով սկսեց ճաշել։

—Իսկ քեզ համար ո՞վ ճաշ կբերի, հարցրեց աղջիկը Սիլւանին։

—Ոչ ոք, ասաց Սիլւանը։

—Մի՞թէ դու ազգականներ և բարեկամներ չունես։

—Ո՛չ, պատասխանեց Սիլւանը։

Աղջիկը կարեկցութեամբ նախ նայեց Սիլւանի, ապա իր հօր վրայ։ Հայրը հասկացաւ աղջկայ հայեացքը և իր ճաշից բաժին հանեց Սիլւանին։

Միւս օրն աղջիկն աւելի շուտ եկաւ, և երբ տեսաւ, որ հայրը իր վրայ չէ նայում, նա Սիլւանի ձեռքը սահեցրեց մի նկանակ, որ մայրը իրան էր տւել, իսկ ինքն այն պահել էր Սիլւանի համար։ Սիլւանը նայեց աղջկան և իր ամբողջ կեանքում առաջին անգամն էր, որ ժպտաց։

VI

Այսեն օր աղջիկը դալիս էր անտառ և իր հօր ու Սիլւանի համար ճաշ էր բերում։ Աղջիկը մօրը պատմել էր խեղճ փայտահատի մասին, որը ոչոք չունէր, որ իր համար կերակուր բերէ, իսկ աղջկայ մայրը խղճացել էր փայտահատին և սկսել էր նրա համար էլ ճաշ պատրաստել ու իր աղջկայ միջոցով նրան ուղարկել։

Մի անգամ Սիլւանը անտառով տուն էր վերադառնում, երբ յանկարծ լսեց, որ մէկը տնքում է։ Նա կանգնեց, ականջ դրեց, որ տեսնէ որտեղից է գալիս տնքոցը. գնաց դէպի այն կողմը և տեսաւ, որ մի մարդ պառկած է կոտրած ոտով։ Վէրքից առւի նման հոսում էր արիւնը։ Սիլւանը մտաբերեց, որ երբ ինքը գիտնական էր, դէղերում կարդացել էր այն մասին, թէ ոմ խոտերն են օգտակար վէրքերի համար, և գնաց այդ խոտերը գտնելու։ Նա չատ հեռուն չգնաց. շուտով դրտաւ բուժիչ խոտը, դրաւ վէրքի վրայ, շապկից մի կտոր պատ-

ռեց և կապեց ոտը. յետոյ նա չալակեց վիրաւոր մարդուն և տարաւ իր տունը: Նա դրաւ իր անկողնում, ընթրիք տւեց նրան, իսկ վիրաւորը մի քիչ թեթեւութիւն զգաց, դադարեց անքալուց և պատմեց Սիլւանին, որ ինքն էլ է փայտհատ, որ այդ օրը գերան էր կտրում և սխալմամբ խփել էր ոտին, վիրաւորել իրան:

—Է, ինչ անենք, ձեռ ինձ մօտ, մինչև որ կառողջանայ ոտդ, ասաց Սիլւանը:

Այնուհետև վիրաւոր փայտհատը սկսեց նրա մօտ ապրել: Ամեն օր առաւօտեան և երեկոյեան Սիլւանը փոխում էր նրա բուժիչ խոտերը և կապում էր վէրքը: Շուտով փայտհատը լաւացաւ և բաժանուեց Սիլւանից: Սիլւանի համար շատ դժւար էր այդ բաժանուելը, բայց ինչ արած, նա չէր ուզում, որ փայտհատը գործից յետ ձնայ:

Այդ օրից սկսած Սիլւանի համբաւը տարածւեց ամենուրեք, որ նա կարողանում է բժշկել, ուստի մարդիկ գալիս էին նրա մօտ բժշկւելու: Պատահում էր, որ երբ վերադառնում էր աշխատանքից, տեսնում էր, որ ժողովուրդն արդէն իրան էր սպասում: Բժշկութեան համար Սիլւանը ոչոքից փող չէր վերցնում, ընդհակառակն շատ անգամ ինքն էր ուտացնում և խմացնում հիւանդին, մինչև անգամ իր տանը պահում, երբ տեսնում էր, որ նա հիւանդ է կարիքից ու սովից:

Նա չէր դադարում աշխատելուց և ամեն օր իր ընկերի հետ անտառ էր գնում, իսկ ճաշին սպասում էր իր ընկերոջ աղջկան, որին նա շատ էր ընտելացել:

Մի անգամ աղջիկը չեկաւ: Սիլւանն ընկերից հարցրեց նրա չըգալու պատճառը:

—Հիւանդացել է, պատասխանեց ընկերը:—Ազատ ժամերին ոչխ նրան այցելելու:

Անցաւ մի շաբաթ, բայց աղջիկը դեռ ևս չը կար: Փայտհատները առաւօտեան իրանց հետ տանում էին ճաշը: Սիլւանը ցերեկն աշխատում, իսկ երեկոյեան բժշկում էր մարդկանց, այնպէս որ նա միայն մի ոտն օր ընտրեց աղջկանն այցելելու:

Սիլւանը գտաւ աղջկան պառկած անկողնում, բոլորովին

դունատուած ու նիհարած։ Մայրը հոգում էր նրա մասին, իսկ նա ամբողջ ժամանակ ժպտում էր։ Երբ նա տեսաւ Սիլանին՝ նրա երեսին էլ ժպտաց և դեպի նա պարզեց իր նիհար, դունատ ձեռքերը։ Սիլանի չրթունքները դողացին և իր կեանքում առաջին անգամ աչուսասուքը հոսեց նրա երեսի վրայով։

VII

Անցաւ մի ամիս։ Սիլանը առաներին գնում էր աղջկանն այցելելու և բժշկելու, իսկ նա արդէն սկսել էր կամաց-կամաց կարգի ընկնել։

Մի անգամ կէսօրին դեռ նոր էին Սիլանն ու իր ընկերը նստել հանգստանալու, երբ յանկարծ երևաց աղջիկը։ Զնայելով որ նա դեռ ևս թոյլ ու դունատ էր և դեռևին չընկնելու համար յենում էր ծառերին, բայց և այնպէս նա ամբողջ ժամանակ ժպտում էր։ Սիլանը նրան տեսաւ թէ չէ, այնքան ուրախացաւ, որ վազեց նրան դիմաւորելու և յանկարծ զգաց, որ իր կրծքում թռչունի նման մի բան թպրտաց. նա հասկացաւ, որ այդ իր սիրտն է, որ բաբախում է։

VIII

Այդ օրից սկսած նրա սիրտը սկսեց բաբախել, ինչպէս բոլոր մարդկանց սիրտը։ Պատահում էր նրան և՛ լալ, և՛ ծիծաղել, և՛ ուրախանալ, և նա այժմ այնքան գոհ էր իր ապրուստից, որ այլ ևս չէր ուզում փոխել իր կեանքի եղանակը։

Ցիշեց մի անգամ Սիլանը իմաստուն Ներսունուն և կամեցաւ նրան այցելել։ Երբ Սիլանը մօտեցաւ նրան, Ներսունին սովորեցնում էր այրի կնոջ որդուն այծերը կթել և նրանց կաթից պանիր ու իւղ պատրաստել։ Նա հեռուից տեսաւ Սիլանին և բացականչեց.

—Զլինի թէ էլի սիրտ չունես։

—Ո՛չ, պատասխանեց Սիլանը ուրախութեամբ։ — Բայց ես

քեզ ժօտ եմ եկել, որպէսզի դու միայն մի հարցիս պատասխանես։

—Ի՞նչ հարցի, ասաց Ծերունին։

—Ինչու երբ թագաւոր էի և ծառայում էի ժողովրդիս, հարցրեց Միլանը,—երբ գիտնական էի և սովորեցնում էի մարդկանց, երբ հարուստ էի և օգնում էի աղքատներին—ինչու այն ժամանակ ոչոք ինձ չէր սիրում և ես անօգնական էի։ Իսկ այժմ, երբ ոչոքի ես ոչ մի բարութիւն չեմ անում, իսկ ինձ բոլորեքեան բարութիւն են անում—ինչու այժմ ես սիրում եմ բոլորին, իսկ ուրիշներն ինձ, և սիրաս բաբախում է։

Ծերունին մտածեց և ասաց.

—Այդ բոլորը նրա համար է, որ երբ դու թագաւոր, գիտնական ու հարուստ էիր, միևնոյն ժամանակ և՛ հպարտ էիր։ Դու կարծում էիր՝ թէ ամեն ինչ գիտես, բայց ամենագէլխաւորը չգիտէիր։ Դու չգիտէիր մարդկանց դէպի իրար ունեցած սէրը։

Թարգմ. Մ. Ղահրամանեան

ՃԱՆԱՊԱՐԴ

—

Տարիների ցաւոտ ճանապարհ
Չունէ ձգտում վայրեր հեռու,
Կեանքի մենակ, ցաւերն անտակ,
Անօգնական, անապատում...

Եւ վտանում են ստոյգ յոյզեր,
Եւ յիշում է մանուկ օրեր.
Է՛յի հանգում կայծ ու կրակ,
Է՛յի լիքը որթ ու մենակ...

Նորից չանում յառաչ լեռնել՝
Խորտակ սրտին տալով վէրկ ոյժ.
Բայց իր ուղին փուշ ու անել,
Սրտի վէրքեր՝ խորն ու անբուժ։

Յանկարծ վտանում մարած խոհեր,
Էլի ճամարում ուղին ի վեր.
Յիշում նախկին իր գաղափար—
Իր կեանքի տենչ՝ իր հեք եղբայր...

Ս. Իզմիրեան

ԻՄ ՓՈՔՐԻԿ ՀՐԱՆՈՑՆ ՈՒ ՎԵՀԱՆՈՑԻՆ

—

Ձեր չքնաղությունը մաքուր է, ինչպէս հրեշտակների գեղեցկությունը։ Սակայն ոչքան դուք փխրուն ու քնքոյշ էք... Ինքը Արարիչ-Աստուած սիրոյ քնքշանքով ձեր ժպիտը օրհնի... Դուք ինձ երջանկությունն էք բերում։ Ձեր անմեղ աչքերը երգում ու արտացոլում են երկինքը. ձեր արցունքը մայիսեան ցող է. ձեր թոթովմունքը լսելով՝ իմ դաղրած հոգին հանդըստանում է և գալոց տարինների մշուշի միջով տեսնում է ձեր ապագայ ծաղկափթիթ կեանքը... Ձեր քունը այնքան բերկրալի ու խաղաղ է, կարծես կեանքի առաջին օրերը, երջանկությեան առաջին աստիճանն է... Ձեր քնած ժամանակ՝ անեղևոյթ պահապանը իջնում է երկնքից և կիսախաւարի մէջ թեքւելով ղէպի ձեզ՝ շշնջում է. «Բնեցէք, մանուկներ, ձեզ փայփայելով՝ գուրգուրանք և ջերմութիւն եմ արտաշնչում և հովանաւորում եմ ձեզ թեւիս տակ»։ Նա օրօր է երգում, իսկ դուք մտորում էք... երկրային վաղանցուկ օրերի ճակատագրի, թէ դրախտի գաղտնիքների մասին... Նրա հետ թեթև ու ոսկեայ թելով կապւած էք դուք. նա չի թոյլ տալ, որ գայթակղությունը խամրեցնէ ձեր անմեղ ու անարատ հոգին։ Ո՜հ, երկրի նոր հիւրեր! Դուք գարնան ծաղիկներ էք։ Առանց ձեզ՝ ընտանիքը միևնոյն է, թէ երկինքը՝ առանց աստղերի։ Դուք երկնային ցող էք՝ ծանր աօթին՝ թառամած վարդի համար։ Բայց քնքոյշ ծաղիկը վախենում է փոթորկից. վատ եղանակին չը փախչէք, չը հեռանաք... Ո՜հ, տխուր կեանքիս սիրալիր բողբոջներ...

Ջ. Տ.-Գ.

(Հետեւողութիւն)



Խ. ԱԲՈՎԵԱՆ

(Ծննդեան 100 ամեակի առթիւ)

Նախահայր արդի հայ գրագիչներուն,
Հիմնադիր հայոց աշխարհիկ լեզուին.
Ծնեցար հանճար Աբովեան գեղից
Դարերով տանջած Առարատ երկրիցդ։

Փարպեցի

—

Ո՞վ է Աբովեանը և ինչ գործ կատարեց նա։

Խաչատուր Աբովեանը մեր նորագոյն գրականութեան նահապետն է և մեր աշխարհիկ լեզուի հիմնադիրը։

Աբովեանը եղաւ առաջինը, որ խօսեց հայ ժողովուրդի հետ նրան հասկանալի լեզուով՝ աշխարհաբար։

Մի յանդուգն գործ էր դա, որ կարող էր անել միայն Աբովեանի նման հայրենասէրը, ի նկատի չառնելով իր դէմ յարուցած վտանգները նոյն ազգի ձեռով, որի համար ինքն աշխատում էր։

Այդ ժամանակ գիտութիւնը հոգևորականութեան ձեռքումն էր, իսկ հոգևորականութիւնը միշտ հալածում էր Աբովեանին, համարելով նրա կատարածը մի ազգակործան գործ։

Սակայն Աբովեանը կանգ չի առնում ոչ մի արգելքների առաջ և գլուխ է բերում այդ մեծ և միևնոյն ժամանակ դժուարին գործը։ 1840—41 թուականին արդէն պատրաստ էր «Վէրք Հայաստանի» հայոց առաջին վէպը, այն էլ աշխարհաբար լեզուով։

—

Աբովեանը ծնուել է 1804—5 թուին Երևանի նահանգի Քանաքեռ գիւղում։ Նրա հայրը՝ Աբովի որդի Աւետիքը մի աստուածավախ, բարեպաշտ և առաքինի անձնաւորութիւն էր ու իր հայրենակիցների յարգանքը վայելում։

Fernsprech-

Name	Nr.



Anschlüsse

Adresse

Երբ Աբովեանը 10—12 տարեկան է դառնում, ծնողները տանում են Էջմիածին և յանձնում Եփրեմ կաթուղիկոսին։ Կաթուղիկոսն ուրախութեամբ ընդունում է մանուկ Խաչատուրին՝ իր բարեկամի որդուն և խոստանում իր հայրական հոգատարութիւնը։ Նա յանձնում է Աբովեանին Անտոն եպիսկոպոսին։

Հինգ-վեց տարի Էջմիածնում մնալուց յետոյ Աբովեանը տեղափոխւում է Թիֆլիս և սկսում աշակերտել ժամանակակից հայկաբան Պօղոս Ղաչաբաղցու մօտ, որը, Նազարեանցի ասելով, «աւելի ծեծ էր տալիս, քան ուսում»։

1824 թուին կատարւեց հայերիս համար մի թանկագին բան՝ երջանկայիշատակ Ներսէս V Աշտարակեցի կաթուղիկոսը Թիֆլիսում հիմնում է իր վաղուց ցանկացած դպրոցը։ Պօղոս վարդապետի խոցից Աբովեանը տեղափոխւում է Ներսիսեան նորակառոյց դպրոցը։ Այստեղ էր ուսանում և հայ ազգի միւս անխոնջ ու բարեկիրթ մշակը՝ Մաթեւոսեանց Նազարեանցը։

1826 թուին Աբովեանն աւարտում է դպրոցը և վերադառնում Հաղբատ կաթուղիկոսի մօտ, որպէսզի առնի իր թըղթերը և ծնողների հետ գնայ Վենետիկ։ Սակայն վրայ է հասնում ռուս-պարսկական պատերազմը և Աբովեանի փափագն անիրագործելի մնում։ Նա վերադառնում է Էջմիածին և մտադրւում ընդունել կուսակրօնութիւն, սակայն հեռու հիւսիսից գալիս է մեկը, որ կորզում է նրան այդ խաւար մթնոլորտից և առաջնորդում դէպի լոյսը—դիտութիւնը։

Դա Դորպատի համալսարանի ուսուցչապետ Պարրոտն էր։ Պարրոտը ռուս-պարսկական պատերազմից յետոյ գալիս է Կովկաս մի քանի մարդկանց հետ գնացած գիտական հետազօտութիւններ կատարելու։ Նրա նպատակներից մեկն էր և բարձրանալ Մասիսի գագաթը, որը մինչև այդ ժամանակ անմատչելի էր համարւում հայերի համար, որովհետև Ս. Յակովբի նման սուրբ մարդը չէր կարողացել բարձրանալ։

Գալով Էջմիածին, գիտնականը խնդրում է կաթուղիկոսից մի տեղացի առաջնորդ, որը տիրապետէր ռուսաց լեզուին։

Կաթուղիկոսը կատարում է նրա խնդիրը, տալով Աբովեանին իբր ուղեկից։

Աբովեանը ճանապարհին մտածում ու չփում է այդ մեծ գիտնականի հետ և իր վշտառատ սիրտը բաց անում նրա առաջ։ Պարոյան ուշադրութեամբ լսում է այդ անսովոր երիտասարդին և բարոյական պարտք է համարում մի բարութիւն անել՝ տանել իր հետ Դորպատ։

Երբ Աբովեանը վերադառնում է կրկին էջմիածին և յայտնում իր մտադրութիւնը ծնողներին ու կաթուղիկոսին, բոլորը դէմ են կանգնում։ Կաթուղիկոսը, ինչպէս նամանաւանդ հայ հոգևորականութիւնը, համոզւած էր, որ հեռանալով հայրենիքից և կրթւելով գերմանական միջավայրում, կըդառնայ գերմանացի լիւտերական։ Իսկ մտերիմները չէին կամենում, որ իրանց որդին երկար ժամանակով հեռանայ իրանցից։ Սակայն Աբովեանը անդրդուելի է մնում. նա անտես է անում թէ ծնողների յորդառատ արցունքը և թէ ծերունի կաթուղիկոսի հայրական խրատներն ու յորդորները։ Ահա որքան մեծ էր նրա մէջ լուսաւորութեան տենչը։

1830 թուականին Աբովեանն արդէն Դորպատումն է։

Նա վեց տարւայ մէջ իւրացնում է եւրոպական քաղաքակրթութիւնը՝ գիտութիւնը, սակայն հաստատ պահելով իր պարզնական աւանդութիւնները ու եկեղեցական մտքերը։

1836 թուին լի գործելու եռանդով Աբովեանը վերադառնում է հայրենիք, սակայն շրջան դառնութիւններ էին սպասում նրան։ Խաւարի մէջ թրպրտացող հայերը դրկախառնութեամբ չընդունեցին նոր Մովսէսին, այլ դառնութեամբ և արհամարհանքով։ Նամանաւանդ նրա դէմ դուրս եկաւ հոգևորականութիւնը, զինւած չարամտութեամբ և խաւարամտութեամբ։ Նրանք արդէն Աբովեանին բողոքական էին համարում։ Երբ նա առաջին անգամ պաշտօն է խնդրում Յովհաննէս կաթուղիկոսից, ստանում է վերջնից «որու յաւ կարող ես խմորել մանուկներին» պարզ պատասխանը, որը մի անսպասելի հարւած է պատճառում Աբովեանին։

Ամեն դուռ փակ է Աբովեանի առաջ։

Մտիպատ, տարի ու կէս պարապ մնալուց յետոյ, նա մըտնում է պետական ծառայութեան մէջ՝ նշանակւելով Թիֆլիսի նահանգի գաւառական դպրոցի տեսուչ։

Սակայն ինչ սրտով է ընդունում այդ պաշտօնը՝ թողնում ենք երեւակայել ընթերցողին և խնդրում ենք կարդալ նրա մի քանի նամակները։ Եւ այդ անում է նա ի հարկէ իր օրւայ պարէնը հայթայթելու համար։

1839 *թւին նա ամուսնանում է մի դերմանուհու՝ օրիորդ Էմիլ Լօոզի հետ, նախօրօք խօսք առնելով պահպանել և տղաները կնքել հայոց եկեղեցում։*

Աբովեանը, տեսնելով, որ չի կարողանում իր հայրենիքին ծառայել, որովհետեւ իրան ոչ մի հիմնարկութեան մէջ պաշտօն չեն տալիս, իր հաշւով բաց է անում մի գիշերօթիկ դպրոց, ուր հաւաքում է հայ մանուկներին և սովորեցնում եւրոպական լեզուները ու գիտութիւն։

1848 *թւին կառավարութիւնը, առանց պատճառի, արձակում է Աբովեանին իր պաշտօնից։ Վիշտն ու թախիծը խոցոտում են խեղճ ու ամեն կողմից հալածւած առաքեալի սիրտը և վերջապէս նա գլորւում է մահւան գիրկը։*

Այսպէս է նկարագրում Նազարեանը Աբովեանի կորուստը.

«Պատւական Աբովեան Թիֆլիզից Երեւանի, Երեւանից Թիֆլիզ տարաբերւելով, անվերջ հալածանքի եւ տհաճութիւնների մէջ, հուսկ յետոյ անձնատուր է լինում մի խաւար յուսահատութեան, եւ յանկարծ չքանում է իր ընտանիքի եւ բարեկամների միջից, բայց թէ ո՛ւր, ոչո՛ւմ չգիտէ մինչեւ այսմ էլ։ Միայն դնելով նորա տրտում եւ յուսակտուր երգերին, որ մեր բարեկամներից մինը ուղարկել է ինձ Թիֆլիզից, պիտոյ է եզրափակել, որ Աբովեանը մի խաւար ոգեի մէջ մահու է տւել իր անձը»։

Եւ աւելացնում է.

«Հայոց Հելիկոնի վերայ դափնիք չեն բսնում արժանի գլխի համար, բայց փոյթ չէ. Աբովեանը, ազգի մեծ բարերարը, թէեւ վաղուց մոռացած իր հայրենիքումբ, այնուամենայնիւ փառաւորւում է, եւ պիտի փառաւորվի արդարադատ եւրոպական մարդկութեան պատմագրի մէջ»։

Իսկ մենք՝ հայ ազգի զաւակներս՝ գլխներս խոնարհենք և մխաբերան գոչենք.

Հանգիստ անթաղ ոսկերացդ, հայ ազգի Մովսես եւ ապերախտ ազգի զոհ։

Գրիգոր Զուբարեան

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳ

—

Հովը սուրաց համը պարով,
Քնքոյշ ծաղիկն օրօրւեց.
Դէպի վերև երկչոտ կերպով
Կապոյտ աչքերը թարթեց։

Ծիծեռնակը դեռևին կպաւ,
Գնաց-եկաւ հեալով.
Սիլտակ դօշը ջրին խփաւ
Չըըը՛փ՝ անցաւ երգելով։

Այդ անձրևն է ափով-շափով
Լուսամուտը թխկացնում.
Այդ կաթիլն է՝ գլորւելով
Ապակուց յած է սողում,

Զր՛ռ-չր՛ռ—չռչրռում է
Ճորնըկաթը կտուրում.
Խր՛շ-խրշ—խշխշում է
Ջուրը թրջած փողոցում։

Սոս—որոտն է ամպի ճեղքից
Գոռ-գոչումով դուրս փախչում.
Ահեղ ձէնը կապած մէջքին,
Հարայ կանչում ու փախչում։

Ի՞նչ թմբուկ է տըմբտըմբում է
Այդպէս շատ և ուրախ.
Հօ՛, անձրևը սաստկանում է
Այդպէս շատ և ուրախ։

Դո՛ղ-դո՛ղ—գոչդոչում է
Ցորդած առուն փողոցում.
Ծա՛փ-ծա՛փ՝ դաշն հնչում է
Անհոգ կանչը սենեակում։

Խո՛թ։ Անձրևն էր, որ դադարեց,
Ջուրը բամեց փողոցից.
Արևելքում կամար կապեց
Ծիածանը եօթ գոյնից։

Սէյրի

ՀՐԱՒՈՒՂԻ ԵՒ ԵՐԿՐԱՉԱՐԻ

(Շարունակութիւն)

Երկրիս կեղեւի հաստութիւնը եւ նրա միջուկի դրութիւնը։ Արդէն ոչ մի կասկած չըկայ, որ քանի երկրի խորքը գնանք, այնքան աւելի կըբարձրանայ ջերմութեան աստիճանը։ Ինչպէս տեսանք, ջերմութիւնն աճում է խորութեամբ աստիճանաբար, բայց թէ մինչեւ ո՛ր սահմանը կըշարունակուի այդ և ի՞նչ աստիճանի կըհասնի, անյայտ է մեզ. այնուամենայնիւ երկրիս մակերեսոյթից ոչ շատ հեռու մի որոշ խորութեան մէջ, որը համեմատելով երկրի տրամագծի հետ շատ չնչին է, սարսափելի ջերմութիւն կայ։ Տեսանք նաև, թէ ինչպէս որոշ խորութեան մէջ ջերմութիւնն այնքան բարձր է, որ բոլոր հանքային տեսակները հալած վիճակի մէջ են լինում։ Այստեղից կարող ենք եզրակացնել, որ երկրի ներսը գտնւում է հրահեղուկ մի զանգուած, բայց թէ այդ զանգուածը ի՞նչ խորութեան մէջ է գտնւում, այս և սրա նման հարցերն ամբողջ երկրաբանութեան մէջ ամենադժւար և անլուծելի հարցերից են և թէպէտ վաղուց է, որ ուսումնասիրւում են, բայց բաւարար պատասխան տալ այդ հարցերին անհնարին է նոյն իսկ ներկայումս։

Դեռ Դեկարտը և Լայբնիցը ենթադրում էին, որ երկրի ներսում հրահեղուկ նիւթեր կան. այդ ենթադրութիւնը գիտնական փաստերով հաստատեցին շատ ուրիշ գիտնականներ, որոնց մէջ նշանաւորը էր Լապլասը։ Իբրև հաստատութիւն այդ գաղափարի, ինչպէս վերևն ևս

յիշեցինք, ծառայում են երկրի խորը գնացող ջերմութեան աստիճանի բաշխումը և տաք աղբիւրների գոյութիւնը, իսկ հրաբխային լեռներից դուրս ժայթքող լաւան արդէն մի պարզ ապացոյց է երկրի ներսում գոյութիւն ունեցող նիւթերի հալած վիճակի մէջ լինելուն։ Երկրի զանազան տեղերում ստացած լաւայի բաղադրութեամբ նման լինելը իրաւունք է տալիս ենթադրելու, որ նրանք բոլորը յառաջանում են մի ընդհանուր կենդրոնական զանգւածից, և այն բացատրութիւնները, որ իբր հրաբխային երեւոյթներ յառաջացնող պատճառները տեղական բնաւորութիւն ունեն, այսպիսով հերքւում են։ Հէնց նոյն իսկ բեռնների սեղմած լինելը նոյնպէս ապացոյց է, որ երկիրը հրահեղուկ վիճակի մէջ է եղել մի ժամանակ. պինդ մարմինն անկարող է առանձ մի այնպիսի ձև, որ յատուկ է միայն պտտւող հեղուկ մարմիններին։

Այս և այլ շատ ուրիշ փաստեր բաւականաչափ հիմք են տալիս շատ գիտնականների ենթադրելու, որ երկրի միջուկը ներկայացնում է իբրև մի հրահեղուկ զանգւած և կամ, եթէ միջուկը կարծր է, ծածկւած պէտք է լինի դրսից կարծր կեղեւի տակ գտնւող հալւած հանքային շերտերով։ Բայց շատ ուրիշները չեն ընդունում երկրիս միջուկի հրահեղուկ լինելը, պատճառ բերելով, որ այդպիսի կազմութիւն ունեցող մի մոլորակ այնպէս չի կարող պտոյտ գալ, ինչպէս պտոյտ է գալիս երկիրը. նրանք պնդում են, որ մեր երկիրն ամբողջապէս մինչև կենդրոնը պինդ մարմին պէտք է լինի. նա վաղուց բոլորովին սառել է։ Եթէ ջերմութիւնը այն արագութեամբ սկսէ բարձրանալ, ինչ արագութեամբ որ նկատելի է եղել երկրի ոչ շատ խորը ճեղքւածքներում մարդկանց կատարած փորձերից, այն ժամանակ նոյն իսկ ամենադիմացկուն հալչող նիւթերի հալման կէտը երկրի շատ խոր մասերը չի գնալ։ Բայց դեռ սրանից չպէտք է եզրակացնել, որ երկրի ներսում նիւթերն իսկապէս հալւած դրութեան մէջ են։ Յայտնի է, որ ճնշումը լեռնային տեսակների հալման կէտը աւելի բարձրացնում է, այսինքն նա արգելք է դառնում նրանց հալչելուն, մինչև որ աւելի բարձր աստիճան ջերմութեան ենթակայ լինեն։ Երկրի շատ խորքերում ճնշումը խիստ մեծ կըլինի, ապա ուրեմն մի քանի վերստ խորութեան մէջ, որտեղ թէպէտ ջերմութեան աստիճանը մի քանի հանքային տեսակների համար հալման կէտ է կազմում, իրականապէս կարող է հալւած վիճակի մէջ չըլինել և այդպէս նիւթերի իւրաքանչիւր յաջորդող շերտ նոյն պայմանների մէջ լինելով, կարող է ոչ հալւած, այլ կարծր դրութեան մէջ լինել, միայն եթէ երկրի որևէ կէտում ճնշումը նոյն իսկ ամենաանշան չափով նւազի, այդտեղ նիւթերն իսկոյն ընդունակ կը լինեն հալւելու։ Այսպէս են ենթադրում գիտնականներից ոմանք։

Այս տեսութիւնը պաշտպանում էին Զիւս, Նէյմ, Նէյմար, Բէյեր և շատ ուրիշները, որոնք իրանց կարծիքը նոր փորձերով հաստատում են։ Փորձերը ցոյց են տալիս, որ սաստիկ ճնշման տակ մինչև անգամ պազերը կարծր մարմին են դառնում։ Ինգի հաշուելովը ջուրը 80½ աշխ. մղոն խորութեան տակ մղիկի խորութիւն պէտք է ունենայ, իսկ գրանիտը իր ծաւալը 1/6-ով պէտք է փոքրացնէ և այլն։ Բացի սրանից, հանքերի հալելու աստիճանը ճնշման հետ ուղիղ համեմատութեամբ բարձրանում է։ Երկրի ներսումը, ինչպէս ասում է պրօֆ. Ինօստրանցև, կայ մի ինչ որ ոյժ, որ ճնշման հակառակն է գործում։ Ճնշումը աշխատում է մարմինները խտացնել, մինչդեռ այն ոյժն աշխատում է լայնացնել։ Ենթադրւում է, որ այդ ոյժը տաքութիւնն է, որ խորութեան հետ, ինչպէս տեսանք, բարձրանում է։

Ինչ վերաբերում է երկրի կեղևի հաստութեանը, այդ մասին գիտնականները տարբեր կարծիքներ են յայտնում. ոմանք ենթադրում են, որ արդէն 2½ մղոն և կամ գոնէ 5—6 մղոն խորութեան մէջ սկսւում է հալած զանգւածը. ուրիշները չեն ընդունում, որ երկրի կեղևը այդքան բարակ է. նրանք կարծում են, որ 14—20 մղոն կը-լինի, թէպէտ ամեն տեղ, իհարկէ, միևնոյն հաստութիւնը և հանքային կազմութիւնը չունի։ Այս վերջինն արդէն շատերի կողմից ընդունւած մի թիւ է և քանի գնում՝ աւելի և աւելի կողմնակիցներ է ունենում։

Բայց այս վերջին դէպքում էլ պինդ ծածկոցի և կենդրոնական հեղուկ միջուկի տարբերութիւնը չափազանց մեծ է։ Միջուկը իբրև հրային հեղուկ ենթադրողները կարծում են, որ երկրագնդիս կեղևի հաստութիւնը 20 մղոնից աւելի է։ Երկրի ներսի ճնշումը շատ բարձր է և հէնց սրանից հետևում է, որ հրաբխային հեղուկ զանգւածը շատ խորն է գտնւում։

Բնագէտներն և աստղաբաշխներն աշխատում էին հերքել երկրի միջուկի հրահեղուկ լինելը. նրանք աշխատում էին ապացուցանել, որ երկիրը կարծր մարմին է, որի մէջ տեղ-տեղ երևան են գալիս խոռոչներ, դատարկութիւններ, որ լի են հրահեղուկ զանգւածով. բայց այդ փորձն անյաջող անցաւ։ Երկրաբաններից ոմանք, որոնց մէջ և հռչակաւոր երկրաբան Լեոիէլ, ընդունում են, այսպէս անւանւած, միմեանցից անջատ ստորերկրեայ օջախներ, որոնց մէջ և կենդրոնանում է հրաբխային գործունէութիւնը։ Այդ ստորերկրեայ օջախներից մի քանիսը ենթադրում են, որ կապ ունեն. այս քանը հաստատւում է նրանով, որ երբեմն զանազան հրաբուխներ միաժամանակ բորբոքւում են և կամ ընդհակառակը դադարում են այն ժամանակ, երբ մի ուրիշը ժայթքում է։ Պէտք է ենթադրել, որ այս կապը երբեմն միաժամանակ կտրւում է փլւածքների և երկրիս սեղմւելու հետ կապ ունեցող ուրիշ երևոյթների շնորհիւ, որից և ծագում է հրաբուխների գործունէու-

թեան անկանոնութիւնը։ Այս երևոյթը տեղի չէը ունենայ, եթէ հրահեղուկ զանգւածը կեղևի և միջուկի մէջ եղած ամբողջ տարաձուքիւնը բռնէր։ Ուժանք կարծում էին, որ երկիրը սկսել է սառել կենդրոնից և այդ պատճառով նա բաղկացած է ամբողջապէս պինդ զանգւածից և նրա խտութիւնը բաւական մեծ է։

Ներկայումս երկրի միջուկի խնդրով զբաղւում են շատ գիտնականներ։ Այդ մասին աւելի աչքի են ընկնում Ռիտտերի և Ցեպպրիցի աշխատութիւնները. այլ և այլ հաշիւների հիման վրայ նրանք եզրակացրել են, որ երկրի կենդրոնում ջերմութիւնն հասնում է մինչև 20,000° Ց։ Լաբորատօրիաներում կատարած աշխատութիւնների հիման վրայ կարելի է ասել, որ երկրիս միջուկի ջերմութիւնը շատ և շատ բարձր է, այսինքն մի այնպիսի բարեխառնութիւն, որի ժամանակ գազակերպ մարմինը նոյն իսկ ամենաբարձր ճնշման տակ ևս անկարելի է հեղուկ դարձնել։ Ահա այս պատճառով եթէ երկրի միջուկի ջերմութիւնը ճիշտ է հաշւած, այն ժամանակ չնայած ամենաբարձր ճնշման, երկրիս միջուկը գտնւում է ոչ թէ հեղուկ, այլ մի ուրիշ դրութեամբ, գազակերպ վիճակի մէջ և ինչ էլ որ լինի, երբև գազ, կըլցնէ այն տարածութիւնը, որտեղ գտնւում է։

Երկրիս կենդրոնում բոլոր քիմիական բաղադրութիւնները կամ խառնուրդները վերլուծւում են և ստացւում անխառն տարրեր, որոնք ազատ վիճակի մէջ են գտնւում. մակերևոյթի մօտ ճնշումը պակասում է և կրկին սկսում են կազմակերպւել քիմիական միաւորութիւններ։ Միջուկի շուրջը շատ և շատ բարձր աստիճանի բարեխառնութեան մէջ, ըստ երևոյթին, կազմւում է գազային ծածկոց, որը աստիճանաբար փոխւում է հեղուկ զանգւածի, իսկ աւելի հեռու գըտնւում է կերպարանիլ կամ ստեղծական (пластическое) նիւթը, որից յետոյ սկսւում է պինդ կեղևը։ Երկրի ներսի մասն այդ կերպ պատկերացնելը, իհարկէ, հնթադրական բնաւորութիւն ունի, բայց բաւականութիւն է տալիս ընագէտներին և օգնում է երկրաբաններին բացատրելու հրաբխային երևոյթներ և այլ բաներ։

Այս բոլորից յետոյ բնականաբար մի հարց է առաջ գալիս, թէ երկրի ներսի մասին մեզ դրականապէս շատ բան է յայտնի։ Պէտք է խոստովանել, որ ոչ։ Այդ դրական տեղեկութիւնների քանակը շատ հաւեստ սահմաններից դուրս չէ գալիս։

Այս բոլոր վերոյիշեալ տեղեկութիւնները ցոյց են տալիս մեզ այն, որ բացի դիտողութեամբ կատարած հետազօտութիւններից, սոյն նիւթի վերաբերմամբ ոչ մի ուրիշ բան, ոչ մի ուսումնասիրութիւն չէ կարող հասցնել մեզ հաստատուն, արդիւնաւէտ հետևանքների։ Դժբաղդաբար այդ դիտողութիւնները մեծ արգելքների են հանդիպում, շատ ժամանակ և աշխատանք է պահանջւում. սրանց առա-

ւելութիւնն այն է, որ այդ միջոցով ստացւած արդիւնքն անսխալ հիմնաւոր նշանակութիւն կունենայ։ Յոյս ունենանք, որ ծովային մակընթացութիւնների վրայ տեղի ունեցող դիտողութիւնները, հորիզոնական ճօճանակի վրայ կատարած փորձերը, երկրի ծանրութեան չափելը և այլ երևոյթներ մարդկութեան միջոց կըտան ժամանակին այժմեանից աւելի ճիշտ կերպով մտածելու, քննելու երկրիս կեղևի ֆիզիքական յատկութիւնը և երկրիս միջուկի դրութիւնը։

(Կը շարունակւի)

ԳԻՏԱԿԱՆ

Մարդիկ պիտի թռչեն

Ամերիկացի Հոլլանդ, ջրասոյզ նաւակի հնարողը, լրագրների լրատուներին յայտնել է, թէ ինքը հնարել է մի նոր գործիք, որը կատարեալ յեղաշրջում պիտի ձգի համաշխարհային հաղորդակցութիւնների մէջ։

Դա մի գործիք է, որով մարդիկ պիտի թռչեն օդի մէջ թըռչունների պէս։

Այդ գործիքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ երկու զոյգ թևեր, որոնցից առաջին զոյգն ունի 7 և երկրորդը—10 ֆուտ երկարութիւն, այնպէս որ թափի լայնութիւնը կըլինի 4½—6 մետր։ Թևերը կպցնում են անմիջապէս մարմնին, այն է՝ ուսերին, ձեռներին և զօակատեղին։ Թռչելու համար մարդը վկանունքները պիտի լարի ոչ աւելի քան ման գալիս և մինչև անգամ աւելի քիչ, որովհետև թռչողը վկանունքները խիստ պիտի լարի միայն սկըզբում և վերջը, այսինքն բարձրանալիս և իջնելիս։ Յարմարութեան համար պէտք է թռչել բարձր տեղից, բայց վարժւելուց յետոյ կարելի է թռչել և հարթ տեղից։

Հոլլանդն այդ գործիքը հնարելու վրայ աշխատել է 34 տարի, որի ժամանակ մանրամասն ուսումնասիրել է թռչունների թռչելու եղանակը։ Թռչնի փետուրը բնութեան ամենանուրբ և ամենաուժեղ մեքենաներից մէկն է, իսկ թևը գործում է իբրև ամենաճիշտ պտուտակ. սակայն թռչունը թռչելիս ղեկավարւում է ոչ թէ թևերով, այլ գլխով։

Բաւական է, որ մարդը քիչ ու շատ վկանները լարելով բարձրացաւ, այնուհետև այլևս ոչինչ չի խանգարիլ նրան թեթև ու ազատ ճախրելու օդի մէջ։ Ընդամէնը մարմնի ծանրութիւնը թեթևացնելու համար ոչ մի յարմարութիւն հարկաւոր չէ։ Օդի մէջ թռչելը ենթարկւում է նոյն օրէնքներին, ինչ որ ջրի մէջ լողալը։ Գլխաւորն այն է, որ ծան-

րութեան կեդրոնը գտնւի միշտ գործիքի մէջ տեղը և շարժիչ ոյժը գործի դիմադրութեան կեդրոնի հակառակ։

Հոլլանդը պատմում է, թէ ինչպէս պիտի թռչենք մենք։

«Մկանների լարուած հարկաւոր կըլինի միայն այն դէպքում, երբ կամենանք շատ արագ թռչել, այսինքն 80—150 կիլոմետր մի ժամում։ Թևերի ամրացումը տղամարդկանց համար շատ հեշտ և յարմար է, բայց կանայք ստիպւած կլինին իրենց հագուստի ձևը փոխել։ Թևերը շինւում են բամբուկից. նրանք ընտիր պիտի լինի։ Պարզութիւնը գործիքի գլխաւոր գիծն է և գործիքի պատրաստումը այնքան էժան է, որ մատչելի է ամենքին։ Թռչելիս, թևերի մի քանի հարւածից յետոյ, թռչողը յարմար դիրք կըբռնի, դէմքը դէպի երկիրը դարձրած, և, մարմնի ծանրութիւնը բաշխելով թևերի երկու զոյգի միջև, կըճախրի օդի մէջ։ Իջնելիս պէտք է մի քիչ թեքւել դէպի հորիզոն, բայց կարելի է իջնել և ուղղահայեաց դիրքով։ Քիչ ու շատ վարժւելուց յետոյ կարելի է ազատ ներս թռչել բաց լուսամուտից կամ իջնել փողոցում, դռան առաջ։ Գործիքը կըկըշռէ 25 ֆունտից քիչ և կարժենայ ոչ աւելի քան 20 րուբլի։ Մինչև անգամ քամին շատ էլ չի խանգարիլ թռչելիս։ Միայն խիստ հակառակ քամու ժամանակ հարկ կըլինի թևերը շարժել վարպետօրէն։ Թռչելու նոր գործիքն աւելի անվտանգ կըլինի, քան հեծանիւը և անհամեմատ աւելի անվտանգ, քան աւտոմոբիլը։ Երբ գործիքը կոտրւի թռչելիս, մարդը կարող է իջնել ներքև անվրտանգ կերպով»։

Հոլլանդը վերջացնում է հետեւեալ խօսքերով.

«Ես սպասում եմ, որ մարդիկ պիտի ծիծաղեն իմ թռչելու գործիքի վրայ, ինչպէս որ ծիծաղում էին իր ժամանակին իմ ջրասոյզ նաւակի վրայ. ես սպասում եմ, որ գիտնականները և մտնտագէտները կըսկսեն ապացուցել, որ թռչել անհնարին է առանց մարմնի ծանրութիւնը թեթևացնելու։ Բայց երբ կասկածողները տեսնեն մեր քանի յարկանի տների միջև ծառերի պէս թեթևութեամբ ճախրող կամ գետին իջնող մարդիկ, այնժամանակ թեւրևս հաւատան, որ մարդու համար թռչելը հնարաւոր է։ Ինձ համար միևնոյն է, թէ ինչ կասեն նրանք։ Ես առաջ էլ հարկադրւած եմ եղել սպասելու, կարող եմ սպասել և այժմ»։

ՀԵՐԲԵՐՏ ՍՊԵՆՍԵՐԻ ՄՏՔԵՐԻՑ ԵՒ ԱՖՈՐԻԶՄՆԵՐԻՑ

—

Արդարութիւն

Զարիքի մէջ միշտ բարիքի մասնիկ կայ։ Արդարութիւնը, իր նախնական ձեւով, վրէժի մէջ է կայանում։

—

Հաստատել արդարութիւն, հրսկողութիւն մարդու իրաւունքի վրայ—նշանակում է ուղղակի հնարաւոր դարձնել մարդկանց ներձեցումը։

—

Զանազան տեսակէտներով դրբաւիչ չէ ժամանակակից կեանքը, որ գտնւում է հասարակական պայմանների ճնշման տակ։

—

Արդարութեան հաստատութիւնը սկզբում անհնարին ցրնորք էր և հնարաւոր դարձաւ միայն այն ժամանակ, երբ մարդիկ նւաղ վայրենի դարձան։

—

Մարդիկ տակաւին մինչև այսօր ծայրահեղօրէն եսական են... եթէ մենք այդքան եսական չըլինէինք, օրէնքների կարիք չէինք ունենալ։

—

Շատ դժւար է մարդու հաժար ազատւել այն անտեսանելի շղթաներից, որոնցով շղթայել են նրա խելքը սովորութիւնը և դաստիարակութիւնը։ Այստեղից պարզ է, որ մի ազգ չի կարող ճիշտ դատել իր մասին, ինչպէս և իր գործողութիւնների և կարծիքների մասին։ Այսպիսի մի աֆորիզմ գոյութիւն ունի. «Ոչ մի դար չի կարող իր պատմութիւնը գրել»։

—

Պարտաւորեցուցիչ բարեգործութիւնը արդարութիւնից դուրս է։ Ինչ որ անարդար է, այն միշտ, վերջ ի վերջոյ, և անօգուտ է։

—

Անարդարութիւնը հաւասարապէս խոտելի է, կատարում է այն մի անձն թէ բազմաթիւ անձինք։

—

Բացարձակ բարոյականութիւնն այնպիսի վարք է պահանջում, որի ժամանակ ոչոքի վրնաս չի տրւում։

—

Զուտ, մաքուր արդարութիւնը անհասանելի է։ Բայց մենք պէտք է նայենք կողմնացոյցին, որ մատնանիշ է անում մեզ ուր է այն. այլապէս մենք կարող ենք բոլորովին հակառակ կողմը դառնալ։

Թարգմ. Ա. Եղիազար

ՀԱՆԵԼՈՒԿ

Երկու վանկից մի բառ ունիմ,
Այդ անուն է մի գաւառի,
Ընկած հեռու Պարսկաստանում,
Ցաճկաստանի սահմաններում։

Այդ անունը եթէ վերցնես
Ուշի ուշի վրան նայես,
Կրծանօթացնէ քեզ այն անուան
Հայրենիքը վառ անսասան։

Առաջին տառը եթէ կտրես,
Եւ պարզապէս դու կրտեսնես՝
Նա ցոյց կրտայ քեզ այն ակը,
Որ կարօտ է աղբատ մարդը։



Սոյն վանդակների մէջ տեղաւորել Մ. Նալբանդեանի ամենասիրուն բանաստեղծութիւնից մի յայտնի տունը, ամէն մի բառակուսում մի մի տառ։

Ախպէր

Խմբագիր-հրատարակիչ՝
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1905 ГОДЪ

ЗАДУШЕВНОЕ СЛОВО

ДВА еженедѣльные иллюстрированные журнала для дѣтей и юношества (XXIX г. изданія)

❀ ❀ ❀ СО МНОГИМИ ПРЕМІЯМИ ❀ ❀ ❀

ПОДПИСНОЙ ГОДЪ НАЧАЛСЯ 1-ГО НОЯБРЯ 1904 Г.—ПЕРВЫЕ №№ ВЫСЫЛАЮТСЯ НЕМЕДЛЕННО.

I. ЗАДУШЕВНОЕ СЛОВО
ДЛЯ ДѢТЕЙ
МЛАДШАГО ВОЗРАСТА
(отъ 5 до 9 лѣтъ).

Гг. годовымъ подписчикамъ будетъ выслано:

52 №№ интереснаго, богато иллюстрированнаго журнала, **52 №№**

съ массою повѣстей, разсказовъ, очерковъ, стихотвореній,

и 42 ПРЕМІИ И ПРИЛОЖЕНІЯ,

въ числѣ которыхъ:

1) **Большая картина въ 24 краски** художника К. Тима: **„ЖУЧКИНА СЕМЬЯ“**
2) **12 игръ и занятій для дѣтей** на больш. раскраш. и черн. листахъ.
3) **12 отдѣльныхъ картинъ изъ дѣтской жизни**
4) **6 книгъ „Библіотечки Задушевнаго Слова“**
5) **Маленькій русскій историкъ.** Родная исторія въ разсказахъ и рисункахъ.
6) **Игра—„Звѣринецъ-Лото“,** съ 28 раскрашенными фигурами.

II. ЗАДУШЕВНОЕ СЛОВО
ДЛЯ ДѢТЕЙ
СТАРШАГО ВОЗРАСТА
(отъ 9 до 14 лѣтъ).

Гг. годовымъ подписчикамъ будетъ выслано:

52 №№ интереснаго, богато иллюстрированнаго журнала, **52 №№**

съ массою повѣстей, разсказовъ, очерковъ, стихотвореній,

и РЯДЪ ПРЕМІЙ И ПРИЛОЖЕНІЙ,

въ числѣ которыхъ:

1) **12 иллюстрироз. кн. сочин.** извѣстныхъ писателей для юношества: **М. Б. ЧИСТЯКОВА и В. САМОЙЛОВИЧЪ**
2) **Исторія 349-ти великихъ дней,** съ массою иллюстрацій.
3) **6 кн.„ Исторической Библіотеки“,** въ папочныхъ переплетахъ.
4) **Альбомъ „На память“**
5) **Записная книжка-календарь,** въ изящномъ переплетѣ.
9) **Настольный отрывной календарь-ежемѣсячникъ.**

Кромѣ того, независимо отъ всѣхъ перечислен. премій, при каждомъ журн. будутъ высылаться для родителей и воспитателей: **„ДѢТСКІЯ МОДЫ“ и „ПЕДАГОГИЧЕСКАЯ БИБЛІОТЕЧКА“**

Подписная цѣна каждаго изданія «Задушевнаго Слова», со всѣми объявленными преміями и приложеніями, съ дост. и перес.: на годъ 6 рублей, на полгода (6 мѣс.)—3 рубля, на треть года (4 мѣс.) **2 р.**

Для годовыхъ подписчиковъ допускается разсрочка по 2 рубля: 1) при подпискѣ, 2) къ 1 февраля и 3) къ 1 мая.

Съ перес. за границу годовая подп. цѣна каждаго журнала—8 рублей.

При подпискѣ, во избѣжаніе ошибокъ, просятъ указывать желаемое изданіе (т. е. ВОЗРАСТЪ).

Подписка принимается: ВЪ КОНТОРАХЪ ЖУРНАЛА, при книжныхъ магазинахъ ТОВАРИЩЕСТВА М. О. ВОЛЬФЪ: 1) С.-Петербургъ, Гостиный Дворъ, 18, 2) Москва, Кузнецкій Мостъ, 12, ВЪ РЕДАКЦІИ ЖУРНАЛОВЪ «ЗАДУШЕВНОЕ СЛОВО»—С.-Петербургъ, Васильевскій Островъ, 16-я линія, 5—7. (Обм.) 1—3

ԱՂԲԻՒՐ

XXIII տարի 1905 թ.

պատկերազարդ ամսագիրը 1905 *թ. հրատարակելու է նոյն ողդութեամբ, ծրագրով եւ աշխատակիցների մասնակցութեամբ, ինչպես անցած* հսանեւոյ տարիներ։ **ԱՂԲԻՒՐԻ** նպատակն է հայ մատաղ սերունդը դաստիարակել, ճշմարիտ լուսաւորութեան շաւիղը նրան ցոյց տալ։ Սէր դէպի բնութիւնը, գիտութիւնը եւ մեծաւորը— *ահա թէ ինչ է ուսուցանում* **ԱՂԲԻՒՐԸ**։ Բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը եւ ատելութիւն ու արհամարհանք դէպի չարն ու վնասակարը—*ահա* **ԱՂԲԻՒՐԻ** *ողդութիւնը*։ **ԱՂԲԻՒՐԻ** *ձոխ ծրագիրը հնարաւորութիւն է տալիս մեզ ընդարձակ ծանօթով եւ բազմազան ձոխ բովանդակութեամբ լոյս ընծայել մեր հանդէսը եւ օգտակար ու հետաքրքրական դարձնել այն, երբ հայերդ սոսկ տարեկան* 3 *ր. հրանց բաժանորդագրութեամբ պահպանեն* ԱՂԲԻՒՐԸ։ *Գրեթէ ամենում են* Աղբիւր-Տարազ *միանոյն հասցեով ստացող բաժանորդներդ, վճարելով* 10 *ր. (արտասահման* 18 *ր. կամ* 50 *Քր.)։ Մի թիւն* ԱՂԲԻՒՐ 3 *ր., արտ.* 5 *ր.։* Ասպառի կբաժանորդագրութիւն չէ ընդունւում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція жур. АГБЮРЪ, (Tiflis, Caucase, Rédaction de la Revue ACBÜR).

Խմբագիր-հրատարակիչ՝ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

ՏԱՐԱԶ

XVI տարի թ. 1905

Գեղարուեստական, գրական, գիտական, հասարակական, ընկերական *պատկերազարդ շաբաթաթերթը* 1905 *թ. հրատարակելու է իր ձոխ եւ ընդարձակ ծրագրով։* Տարազի *նպատակը, ողդութիւնն ու ձգտումն է հայերի մէջ տարածել ողիղ հայեացք դէպի* ԳԵՂԵՑԻԿԸ, ԲՈՒՐԻՆ ԵՒ ՕԳՏԱԿԱՐԸ։ Գեղարուեստը, գրականութիւնը, գիտութիւնը, դաստիարակութիւնն ու ընկերատութիւնը *կազմում են* **ՏԱՐԱԶԻ** *հիմքը։ Երկրորդական յարգական բաժանմունքները—*յօդուած, քրքակցութիւն, հեռագիր, կառավարչ. կարգադրութիւն, ժամանակագրութիւն, կենսագրական, ճանապարհորդական, նորութիւններ, ծրագրեր, խորհրդակցութիւն եւ այլն՝ *ՏԱՐԱԶԸ դարձնում են անհրաժեշտ բերք ժողովրդի բոլոր խաւերի համար։ Իսկ գարնային, ցնծալի ցնծութիւն, կար, ձեւ, ձեռագործ, թատրոն, երաժշտութիւն եւ այլն աւելի են մասնաւորում* **ՏԱՐԱԶԸ** *ամենն ընտանիքի համար։* **ՏԱՐԱԶԻ** *տարեկան գինը* 6 *ր., արտասահման* 10 *ր.։* ԳՐԵՄԻԱՆ *ասանում են միմիայն նրանք, որոնք բաժանորդ են* Աղբիւր-Տարազին *եւ վճարել են* 10 *ր. (արտասահման* 18 *ր. կամ 50 Քո.)։* Ասպարիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում։

Հասցէն՝ Тифлисъ, редакція журнала ТАРАЗЪ, *կամ* Tiflis *(Caucase)* Rédaction de la Revue TARAZ.

Խմբագիր-հրատարակիչ՝ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ